Խ.Է. Սաֆարյան

ԹԱՎՇԻ ՍՈՐՏԱՑԻՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԲԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Թալինի և Արզնի–Շամիրամի ջրանցքների կառուցմամբ ոռոգելի դարձան Թալինի և Հոկտեմբերյանի շրջանների միջև ընկած մի քանի տասնյակ հազար հեկտար դարավոր անմշակ դաշտեր, որտեղ հիմնականում տնկվել են խաղողի և պտղատու այգիներ:

Այդ տարածություններում այգիների հիմնադրման համար շատ կարևոր է խաղողի լավագույն, տեղի հողակլիմայական պայմաններին համապատասխան սորտերի ընտրությունը, ագրոմիջոցառումների այնպիսի համակարգի մշակումն ու իրականացումը, որը նպաստի պահանջվող որակի խաղողի բարձր բերքի ստացմանը:

Ելնելով վերոհիշյալից, Թալինի շրջանի Արտենիի պետական տնտեսության պայմաններում ուսումնասիրվել են խաղողի նոր, սելեկցիոն Մուսկատ Սուսաննա, Ռուբարտու, Գինու վաղահաս և նորակերտ սորտերի ագրոտեխնիկայի մի քանի տարրեր:

Հետազոտվել է վազերի բեռնվածության և էտի տարբեր երկարությունների ազդեցությունը այդ սորտերի վազերի աճեցողության, բերքի քանակի և որակի վրա:

Այգու տնկման 5-րդ /1974 թ./ տարում բոլոր սորտերի վազերին տրվել է 40-50 աչք, իսկ 6-րդ տարում՝ 51-60 աչք բեռնվածություն: Բերքատու մատերը գարնանը էտվել են երեք տարբերակով՝ կարճ, միջակ և երկար /5-6, 7-8 և 9-10 աչքի վրա/: Ըստ բերքատու մատի երկարության, որոշվել է տարբեր աչքերի պտղաբերության տոկոսը:

Փորձի բոլոր տարբերակներում հաշվարկվել են աչքերի բացվածության և պտղաբերող շիվերի տոկոսը, պտղակալման և պտղաբերման գործակիցները, մեկ ողկույզի միջին քաշը, մեկ վազի և մեկ հեկտարի բերքը:

Որոշվել է պտղահյութի շաքարայնությունը և թթվությունը, կատարվել են շիվերի աճի և հասունացման վերաբերյալ չափումներ: Դիտարկվել են նաև Ֆենոփուլերի անցման ժամկետները:

Փորձերը դրվել են 2,5 x 1,5 մ խտություն ունեցող այգում, երեք կրկնողությամբ՝ յուրաքանչյուր կրկնողությունում ունենալով 20 վազ:

Ստացված տվյալները ամփոփված են 1-6-րդ աղյուսակներում:

Առաջին երկու աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ վազերի բեռնվածության մեծացումը /40-ից մինչև 60 աչք/ ուսումնասիրվող սորտերի աչքերի բացվածության վրա էական ազդեցություն չի թողել, որովհետև բացված աչքերի քանակը կախում ունի նաև տվյալ տարվա

կլիմայական առանձնահատկություններից և աշքերի ժմռելու պայմաններից: Բեռնվածության աճի հետ մեկտեղ մեծացել է պղաբերող շիվերի տոկոսը:

Այսպես, Մուսկատ Սուսաննա և Ոիրարտու սորտերինը ավելացել է 4-5 o/o-ով, Գինու վաղահասինը՝ 10-16 o/o-ով, իսկ նորակերտ սորտի վրա էական փոփոխություն չի նկատվել: Գրեթե նույն օրինաչափությամբ էլ փոխվել է վազերի պղաբերման գործակիցը:

Բեռնվածության մեծացման հետ մեկտեղ, պղաբերող շիվերի դիտվող աճը հետևանք է նաև վազերի աճող հասակի փոփոխության:

Բոլոր սորտերի պղակալման գործակիցը, վազերի բեռնվածության աճին զուգընթաց, նվազել է:

Առաջին և երկրորդ աղյուսակների տվյալները վկայում են,որ ուսումնասիրվող բոլոր սորտերի բերքատու մասը երկարացնելիս ինչ-որ չափով մեծանում է աշքերի բացվածության տոկոսը, զգալիորեն ավելանում է պղաբերող շվերի տոկոսը և պղաբերման գործակիցը, սակայն նվազում է պղակալման գործակիցը:

Փորձի բոլոր տարբերակներում լավ է պղաբերում Մուսկատ Սուսաննա սորտը, մեծ է նաև վերջինիս պղակալման գործակիցը: Իրենց պղաբերությամբ Մուսկատ Սուսաննային քիչ են զիջում Ոիրարտու և Գինու վաղահաս սորտերը: Դեռևս թույլ է պղաբերում նորակերտ սորտը, որի պղակալման գործակիցը մեկից չի անցնում:

Երրորդ և չորրորդ աղյուսակների տվյալները հավաստում են,որ վազերի բեռնվածությունը 40-ից մինչև 60 աշք մեծացնելիս բոլոր սորտերի բերքը ավելանում է: Մուսկատ Սուսաննա սորտի բերքի հավելումը կազմում է շուրջ 86, Ոիրարտուինը՝ 61, Գինու վաղահասինը՝ 120 և նորակերտինը՝ 40 o/o:

Բեռնվածության աճի հետ մեկտեղ ավելանում է մեկ ողկույզի միջին քաշը՝ Մուսկատ Սուսաննա սորտինը շուրջ 40, Ոիրարտուինը՝ 25, Գինու վաղահասինը՝ 46 և նորակերտինը 35 գրամով: Այս հանգամանքը հետևանք է այն քանի, որ վազերը դեռևս երիտասարդ են /5-6 տարեկան/ և, անկախ բեռնվածությունից, նրանց բերքատվության պոտենցիալ հնարավորությունները 1975 թվականին ավելի մեծ են եղել, քան 1974 թվականին:

Բեռնվածության փոփոխմամբ պայմանավորվող բերքի աճը,թեև քիչ չափով, ուղեկցվել է պղահյութի շաքարայնության իջեցմամբ և թթվության բարձրացմամբ:

Երրորդ և չորրորդ աղյուսակների տվյալները վկայում են նաև այն, որ բոլոր սորտերի բերքատու մասի երկարացումը դրականորեն է ազդում բերքի բարձրացման վրա:

Աղյուսակ 1

ԷՏԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՍԿԱՏ ՍՈՒՍԱՆՆԱ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ ՍՈՐՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԻ ՎՐԱ

Սորտը	Մուսկատ			Սուսաննա			Ուրարտու					
Տարին	1974 թ.			1975 թ.			1974 թ.			1975 թ.		
Վազի բռնվածությաշք	41 - 50			51 - 60			41 - 50			51 - 60		
Էտի երկարությունը, աշք	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10
Աշքերի բացվածությունը, o/o	89,6	92,0	93,2	87,0	90,7	93,5	83,7	85,5	87,8	82,6	85,8	87,5
Պտղաբերող շիվերը, o/o	61,8	62,7	64,6	66,3	67,5	67,0	50,4	53,2	55,2	55,8	56,7	57,9
Պտղակալման գործակիցը	1,23	1,24	1,16	1,14	1,12	1,10	1,10	1,09	1,08	1,06	1,04	1,03
Պտղաբերման գործակիցը	0,67	0,71	0,74	0,73	0,74	0,76	0,56	0,58	0,59	0,59	0,62	0,61

Աղյուսակ 2

ԷՏԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆՈՒ ՎԱՂԱՀԱՍ ԵՎ ՆՈՐԱԿԵՐՏ ՍԱՐՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԻ ՎՐԱ

Սորտը	Գինու վաղահաս						Նորակերտ					
Տարին	1974 թ.			1975 թ.			1974 թ.			1975 թ.		
Վազի բեռնվածություն. աչք	41 - 50			51 - 60			41 - 50			51 - 60		
Էտի երկարությունը, աչք	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10
Աչքերի բացվածությունը, %/%	81,0	83,2	85,2	81,6	85,9	89,7	82,2	84,5	86,2	85,1	86,3	87,2
Պտղաբերող շիվերը, %/%	32,5	34,5	35,6	43,0	47,6	51,5	29,5	32,8	34,2	24,0	28,3	30,7
Պտղակալման գործակիցը	1,09	1,07	1,06	1,05	1,04	1,04	1,00	1,00	1,00	1,00	1,00	1,00
Պտղաբերման գործակիցը	0,38	0,38	0,40	0,45	0,50	0,52	0,33	0,36	0,38	0,24	0,28	0,38

Աղյուսակ 3

ԷՏԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՍԿԱՏ ՍՈՒՍԱՆՆԱ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ ՍՈՐՏԵՐԻ ԲԵՐՔԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Սորտը		Մուսկատ			Սուսաննա			Ուրարտու					
Տարին		1974 թ.			1975 թ.			1974 թ.			1975 թ.		
Վազի բեռնվածությ. աստիճան		41 - 50			51 - 60			41 - 50			51 - 60		
Էտի երկարությ., աստիճան		5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10
Բերքը	Մեկ ողկույզի միջին քաշը, գր	99,0	95,5	93,5	140,5	135,5	131,4	94,2	92,5	91,0	124,0	118,3	116,0
	Մեկ վազի միջին բերքը, կգ	2,64	2,79	2,86	4,86	4,97	4,82	1,96	2,05	2,13	3,06	3,14	3,20
	Մեկ հեկտարի բերքը, տ	70,9	74,3	76,3	128,4	132,1	129,7	52,3	54,6	56,7	81,5	83,3	84,8
Պարամետրերը	Շաքարի %-ը	22,2	21,9	21,4	21,0	20,9	20,1	23,3	23,1	23,0	23,6	23,2	23,0
	Թթվությունը, գ/լ	6,3	6,5	6,7	6,9	6,9	6,6	7,4	7,4	7,5	7,5	7,4	7,5

Աղյուսակ 4

ԷՏԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆՈՒ ՎԱՂԱՀԱՍ ԵՎ ՆՈՐԱԿԵՐՏ ՍՈՐՏԵՐԻ ԲԵՐՔԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Սորտը		Մուսկատ սուսաննա						Աիրարտու					
տարին		1974թ			1975թ			1974թ			1975թ		
վազի բեռնվածք, աչք		41 - 50			51 - 60			41 - 50			51 - 60		
Էտի երկարությունը, աչք		5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10	5-6	7-8	9-10
Բերքը	Մեկ ողկույզի միջին քաշը, գր.	117,0	114,5	109,0	169,0	159,5	156,5	100,5	100,0	97,0	139,0	133,5	128,5
	Մեկ վազի միջին բերքը, կգ	1,47	1,54	1,64	2,39	3,66	4,50	1,25	1,36	1,46	1,55	1,92	2,04
	Մեկ հեկտարի բերքը, ց:	39,4	40,6	42,9	90,1	97,6	105,9	33,4	36,4	39,1	45,2	51,3	54,4
[illegible]	Շաքար, o/o	22,5	22,3	22,1	21,6	21,4	21,1	21,8	21,6	21,3	21,0	20,8	20,4
	Թթվությունը, գ/լ	7,4	7,5	7,5	7,6	7,7	7,6	7,6	7,7	7,7	7,8	7,9	7,9

Երկար /9-10 աշք/էտի դեպքում, թեև ինչ-որ չափով նվազել է մեկ ողկույզի միջին քաշը, սակայն ողկույզների քանակի ավելացումը նպաստել է ընդհանուր բերքի բարձրացմանը:

Էտի երկարացման ազդեցությունը բերքի վրա, փորձի տարբեր տարիներին և առանձին սորտերի մոտ, միանման չի եղել:

Բերքատու մատի երկարացումը Մուսկատ Սուսաննա և Ռիբարտու սորտերի բերքի վրա էական ազդեցություն չի թողել: Դեռ ավելին՝ Մուսկատ Սուսաննա սորտի վազերը 1975 թվականին 7-8 աշք երկարությամբ էտելիս ավելի բարձր բերք են տվել, քան 9-10 աշքի վրա էտելու դեպքում: Այս տեսակետից պատկերը միանգամայն այլ է Գինու վաղահաս և Նորակերտ սորտերի մոտ: Եթե 1974 թվականին այս սորտերի բերքի վրա երկար էտը էական ազդեցություն չի թողել, ապա 1975 թվականին այդ ազդեցությունը շատ ավելի զգալի է եղել՝ Գինու վաղահաս սորտի բերքի հավելումը, կարճ էտի համեմատությամբ, կազմել է 17, իսկ Նորակերտինը՝ 20 %:

Բերքի ավելացման համեմատ, երկար էտի տարբերակում, պտղահյութի մեջ որոշ չափով նվազել է շաքարների տոկոսը և բարձրացել թթվությունը:

Փորձի բոլոր տարբերակներում բարձր բերք է ապահովել Մուսկատ Սուսաննա սորտը: Իրենց բերքատվությամբ այս սորտին քիչ են զիջել Ռիբարտու և Գինու վաղահաս սորտերը: Առայժմ փոքր բերք է տվել Նորակերտ սորտը, հավանաբար այն դեռևս լրիվ բերքատվության չի անցել: Փորձի բոլոր տարիներին և բոլոր տարբերակներում, պտղի մեջ եղած շաքարների մեծ պարունակությամբ, աչքի է ընկել Ռիբարտու սորտը: Համեմատաբար քիչ շաքար է կուտակել Մուսկատ Սուսաննան: Այս տեսակետից միջին տեղ է բռնում Գինու վաղահասը:

Հինգերորդ աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող սորտերի էտի երկարության փոփոխությունը առաջ է բերում բերքատու մատի հանգույցների պտղաբերման որոշակի փոփոխություն: Էտի բոլոր երկարությունների դեպքում առաջին երկու հանգույցների պտղաբերությունը ցածր է, սակայն բերքատու մատի երկարացմանը զուգընթաց այդ հանգույցների պտղաբերությունը ավելի է նվազում:

Հինգերորդ աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ էտի բոլոր երկարությունների դեպքում շատ լավ են պտղաբերում 4-7-րդ հանգույցները: Երբ Մուսկատ Սուսաննա և Ռիբարտու սորտերի բերքատու մատի երկարությունը հասնում է 9-10 աշքի, ապա վերջին երկու հանգույցների պտղաբերությունը զգալիորեն նվազում է, իսկ Գինու վաղահաս սորտի երկար էտի դեպքում վերջին հանգույցները իրենց պտղաբերությամբ գրեթե չեն զիջում միջին հանգույցներին:

Աղյուսակ 5

ՄԻ ՔԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ԱՇՔԵՐԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ օ/օ-Ը
ԷՏԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Սորտը	Էտի երկարությունը, աչք	Աչքերի կարգային համարը հիմքից հաշված										
		1	2	3	4	5	6	7	8	9	10	- - - - - - - -
Մուսկատ Սուսաննա	5-6	18,6	30,1	42,4	54,0	82,1	75,8	-	-	-	-	
	7-8	12,4	26,2	51,8	62,0	58,6	70,9	68,2	36,3	-	-	
	9-10	10,1	26,9	36,4	47,2	54,4	56,1	63,5	40,1	31,4	27,9	
Ռիզամատ	5-6	16,5	28,3	40,4	52,6	76,4	67,7	-	-	-	--	
	7-8	10,0	21,1	39,4	56,7	49,8	62,2	56,9	27,3	-	-	
	9-10	9,4	22,3	30,4	40,5	43,2	47,4	51,0	36,5	29,3	24,6	
Գինու վաղահաս	5-6	13,8	24,5	36,7	47,8	64,5	58,9	-	-	-	-	
	7-8	9,8	19,7	35,3	49,6	41,4	60,0	51,1	42,0	-	-	
	9-10	8,8	17,9	28,6	37,2	46,4	45,1	48,6	44,2	40,8	42,6	

Աղյուսակ 6

ՎԱՋԻ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՏԻ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՎԵՐԻ ԱՃԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Վազի բեռնվածություն, աշք	Էտի երկարությունը սմ	Մուսկատ Սուսաննա		Ռիզարտու		Գինու վաղահաս		Նորակերտ	
		Մեկ շիվի միջինը							
		Երկարություն, սմ	հասունացման օ/օ-ը	Երկարություն սմ	Հասունացման օ/օ-ը	Երկարություն, սմ	Հասունացման օ/օ-ը	Երկարություն, սմ	Հասունացման օ/օ-ը
1974 թ. 41 - 50	5-6	86	85,0	78	84,0	113	78,4	99	78,9
	7-8	82	84,3	73	83,6	99	77,7	96	77,6
	9-10	80	84,2	69	83,1	96	76,2	92	16,2
1975 թ. 51 - 60	5-6	81	84,1	76	85,8	106	19,4	96	80,1
	7-8	78	83,2	72	84,0	101	78,1	92	78,3
	9-10	76	82,6	70	83,8	98	77,0	89	78,0

Հետևապես, Մուսկատ Սուսաննա և Ռիարատու սորտերի վազերը պետք է էտվեն 6-7 աչք երկարությամբ, իսկ Գինու վաղահասինը՝ 10 աչքի սահմաններում:

Վեցերորդ աղյուսակի տվյալները հավաստում են, որ բեռնվածության ավելացման և բերքատու մատի երկարացմանը զուգընթաց, բոլոր սորտերի շիվերի միջին ածը կրճատվել է որոշ չափով և իջել է դրանց հասունացման տոկոսը:

Համեմատաբար ուժեղ են ածել Գինու վաղահաս և Նորակերտ սորտերի վազերը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել.

1. Ուսումնասիրվող սորտերի վազերի բեռնվածությունը 40-ից մինչև 60 աչք մեծացնելիս զգալիորեն ավելանում է բերքը: Այդ հավելումը հետևանք է նաև վազերի հասակային ածի:

2. Բերքատու մատի երկարացումը /5-6 աչքից մինչև 9-10 աչք/ նպաստում է բոլոր սորտերի բերքատվության բարձրացմանը: Երկար էտի տարբերակում զգալի չափով ավելանում է հատկապես Գինու վաղահաս և Նորակերտ սորտերի բերքը:

3. Էտի բոլոր երկարությունների դեպքում բարձր պտղաբերությամբ են օժտված 4-7-րդ հանգույցները: Գինու վաղահաս և Նորակերտ սորտերի 9-10-րդ հանգույցները իրենց պտղաբերությամբ գրեթե չեն զիջում միջին հանգույցներին:

4. Բեռնվածության ավելացմանը և էտի երկարացմանը զուգընթաց ինչ-որ չափով նվազում է շիվերի միջին ածը և նրանց հասունացման տոկոսը:

5. Բեռնվածության մեծացման և էտի երկարացման հետևանքով ստացվող բերքի հավելումը, թեև փոքր չափով, ուղեկցվում է պտղահյութում շաքարների նվազեցմամբ և թթուների բարձրացմամբ:

Հետևապես, Թալինի շրջանի պայմաններում վերոհիշյալ սորտերի վազերը պետք է բեռնել 60-ական աչքի սահմաններում, Մուսկատ Սուսաննա և Ռիարատու սորտի վազերը էտել 6-7 աչք, իսկ Գինու վաղահաս և Նորակերտ սորտերինը՝ 9-10 աչք երկարությամբ:

Х.Е.Сафарян.

Некоторые вопросы агротехники винограда в условиях Талинского района Арм.ССР

(резюме)

Талинский район один из районов предгорной зоны Армении, где виноград выращивается впервые. Поэтому изучение агробиологических особенностей сортов винограда, установление величины нагрузки куста и длины обрезки в условиях данного района имеют большое значение.

Исследования проводились на новых селекционных сортах: Мускат Сусанна, Урарту, Гину вагаас и Норакерт. Нагрузка кустов у всех сортов составляла: в 1974 году от 41 до 50, а в 1975 году от 51 до 60 глазков на куст. Была изучена также длина обрезки плодовых стрелок в трех вариантах: 5-6, 7-8, 9-10 глазков.

Опыты были заложены в трех повторностях, по 20 учетных кустов в каждой.

В течение опыта проводились: учет процента распустивших глазков и плодоносящих побегов, определение плодоносности почек на разных узлах плодовой стрелки, учет урожайности кустов по вариантам, измерение однолетнего прироста и одревеснение побегов, качества ягод винограда, фенологические наблюдения.

На основании полученных результатов можно прийти к следующим выводам.

1. В условиях Талинского района увеличение нагрузки кустов (от 41 до 60 глазков) повышает урожайность всех испытуемых сортов.

2. При увеличении длины обрезки плодовой стрелки с 5-6 до 9-10 глазков, у всех сортов увеличивается процент распускания глазков и плодоносных побегов, повышается урожай. При длиной обрезке, урожай у сортов Гину вагаас и Норакерт превышал другие сорта.

3. Плодоносность глазков нижних двух узлов у всех сортов была низкая, а с третьего узла она увеличилась и доходила до максимальной на 4-7-х узлах.

4. При увеличении нагрузки куста и длине обрезки несколько снижается рост и одревеснение побегов.

5. С повышением урожая незначительно снижается саха-

ристость и увеличивается кислотность ягод.

Исходя из полученных данных в условиях Талинского района целесообразно установление нагрузки кустов в пределах 60 глазков, обрезку плодовых стрелок рекомендовать по сортам Мускат Сусанна и Урарту на 6-8 глазков, а по Гину вагаас и Норакерт на 8-10 глазков.